Արձանագրություն N 3

ՀԾԿՀ-18/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով էլեկտրոնային ձևով գնանշման հարցման միջոցով գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

23 ապրիլի 2017 թ.
ժամը 12:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լիլիթ Մկրտչյանը, անդամներ՝ Ջուլիետա Բաբայանը, Արթուր Բեգլարյան, Մեսրոպ Ղարիբյանը, Անուշ Սմբատյանը և քարտուղար՝ Էդգար Շադյանը:

Օրակարգ

Գների նվազեցման բանակցությունների և հայտերի գնահատման մասին

ՀԾԿՀ-18/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լիլիթ Մկրտչյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ բանակցություններին ներկայացել է «Սմարթլայն» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ով բանակցությունների ընթացքում 4-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ներկայացրեց ավելի ցածր գնային առաջարկ (գնային առաջարկը կցվում է):

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց իրականացնել հայտերի գնահատումը:

Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

- **«Սմարթլայն» ՍՊԸ -ին՝**

- 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ չափաբաժինների մասով:
- 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 11-րդ չափաբաժնի մասով:
- 19-րդ և 20-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

- **«Սաքի» ՍՊԸ-ին՝**

- 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 19-րդ չափաբաժնի մասով:
- 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 20-րդ չափաբաժնի մասով:

- **«Արվատեկ» ՍՊԸ-ին՝**

- 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 11-րդ, 18-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:
- 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել 1-ին, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 8-րդ և 19-րդ չափաբաժինների մասով:
- 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 17-րդ չափաբաժինների մասով ներկայացված գնային առաջարկը գերազանցել է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ հարցում ներկայացնել:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցել և առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀԾԿՀ-18/2-ԳՀԱՊՁԲ ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից եզրակացությունը տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը ժամը 10:00-ին, ՀՀ ք. Երևան, Սարյան 22 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ	_____	Լիլիթ Մկրտչյան
անդամներ	_____	Ջուլիետա Բաբայան
	_____	Արթուր Բեգլարյան
	_____	Մեսրոպ Ղարիբյան
	_____	Անուշ Սմբատյան
քարտուղար	_____	Էդգար Շադյան